


Архим Қызынчылардын



Дүйнөчү  
ЦФН

КУЗПЕСКРИС

891.99

10299

4-24

Чинукунгхуань, У.

955g ± 10g

6n.

210

99

891.93

4-24

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏՏԻԿՅԱՆ

Ապրիլի 15 1961 թ.

# ԶԱՐԳՎԻ ԱՓին

A 28184 +0292  
II



СИЛЬВА КАПУТИКЯН  
НА БЕРЕГУ ЗАНГИ  
(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1947 г.

## ԽՈՂ ԳՆԱՑՔԻ ՄԵԶ

Պահելի են եղել, երբ դու նեղսիրտ  
Տրտնջացել ես, որ աշխարհում  
Չես ծնվել դու մեծ ու մեծանուն,  
Որ չե՛ շողզողում աստղը փառքիդ...  
Բայց նայիր մի պահ այս ծերունուն,  
Սլաքավարն այս, որ լրջախոհ  
Կանաչ դրոշ է քո դեմ՝ բանում,  
Որ վստահ անցնի գնացքը քո:  
Այսպես երթեր են եկել անցել,  
Գնացքներ՝ լցված կյանքնվ, շնչնվ,  
Ու հչ մի անցորդ չի իմացել  
Նրա անունն իսկ, բայց անվրդով  
Նա ճանապարհ է բացել նրանց՝  
Ինքը մնալով միշտ անանուն,  
Ու ծերացել է այսպես անդարձ  
Այս փոքրիկ, անհայտ կայարանում....

Արդ, ջանա, որ քո երգն էլ լինի  
Մարդու երթի դեմ՝ կանաչ դրոշ  
Որ մարդը վստահ, վստահ անցնի  
Իր ճանապարհը, անցնի որոշ.  
Թեկուզ և ինքը, ինքը մնաս  
Հեռվում աննկատ ու անանուն,  
Ինչպիս հերթապահ ծերուկը այս  
Այս փոքրիկ, անհայտ կայարանում...



## ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ

... Եվ աշխարհօւմ եայի համար դու նո՞ր մի լիտո պրագան,  
Դու կարսոի նո՞ր Արարատ՝ Սովետական Հոյառածն ...



## ՆԵՐԲՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դարենք եկան աղետավոր և ավերի դարերում  
Փշը վեցինք աստղերի պես ու ցըլեցինք աշխարհում.  
Բայց երասխի ափին մնաց փոքրիկ մի հող՝ անառիկ,  
Այն մնաց աստղերի մեջ, մնաց հային՝ հայրենիք:  
Այդ գու էիր, հայոց արև, Սովետական Հայաստան,  
Հոկտեմբերի շնչով ծնված մանուկ էիր և սակայն  
Հիմի արդեն հասակ առել, դարձել ես այր մի պարթե  
Եվ քո նորոգ երջանկության ճանապարհին ես արդեն:  
Թու անուննվ ընկան ռազմիկ քո որդիները գաշտում,  
Թու անունը կտրիմներիդ հետուներից բերեց տուն.  
Դու թմնկ ես մեզ, որպես դրոշ՝ ցողված արյամբ զոհերի,  
Դու՝ մոր նման նվիրական, գու՝ մանկան պես սիրելի,  
Եվ աշխարհում հայի համար դու՝ նոր մի լյառ սրբազն,  
Դու՝ կարուտի նոր Արարատ՝ Սովետական Հայաստան:

## ՆԱՍԱԿ ԴԵՐԻ ՌԱԶՄԱԴԱՇ

Ավարտվեց ձմռան հեքիաթը ճերմակ,  
իր երգարանն է զարունը բացել,  
երգ են կարկաչում աղբյուր ու վտակ,  
Զմեռը հալվել ու երդ է դարձել:

Զարթնել են ծառերն իմ Աբովյանի,  
Քնած բողբողջներն աչքերն են բանում,  
իմ հեռավորըս, ուր ես գու հիմի,  
Ո՞ր զաշտերում ես զարունն ընդունում:

Երջում եմ մենակ մեր Աբովյանով,  
Թեղ են հիշեցնում ամեն ծառ ու քար,  
ինչքան ենք շրջել ծերուկ ու ծանոթ  
Բարդիների տակ այս գեղանկար:

Եվ այս մայթերին ինչքան ես անհոգ,  
Անփույթ խաղացել դու իմ սրաի հետ,  
Քմահաճ զավել ու սիրուս անոգ  
Լցրել տադինապով ու խանդով մի խենթ:

Երջում եմ մենակ, օ՛, քաղցր են այնքան  
Հիշատակներն այս և չար, և բարի.  
Տեսնում եմ անա ես այն աղջկան,  
իմ մրցակցունուն անցած օրերի...

Թվում է նա էլ սիրելի է ինձ,  
(Ախ, չէ որ և նա հիշեցնում է քեզ)  
Ուզում եմ նա էլ միշտ քեզ սպասի,  
Որ քեզնով շնչի, տանջվի, ինչպիս ես:

Անքեն է դարձել կանացի հոգիս,  
Կարոտը տարագ և խանդ, և նախանձ,  
Բայց թող հրդեհվի իմ սիրտը կըկին.  
Տագնապնվ, խանդով ու վշտով անանց:  
  
Թող նըան սիրես, թող դավես զու ինձ,  
Թող զու ինձ անհաս մի երազ մնաս,  
Միայն հաղթությամբ զու տուն գաս կոմից,  
Իմ հեռավորըս, միայն ետ դառնաս...

1943 թ.

## ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նոր էր մարել մարտը դեռ՝

Նամակ բերին զինվորին.

— Կանաչ մնաս, լրաբեր,

Զորություն քո ոտքերին:

Այս գաշտերում արյունոտ

Նամակից ինչ կա բարի.

Լնկերոջ պես թանկ ու մոտ,

Հաղթության պես ցանկալի:

Այս, նամակները փոքրիկ՝

Մոր ձեռքի պես կծկված,

Ասես շոյթւմ են հեռվից,

Որդու դիմքը խանձըված:

Նամակները՝ եռանկյուն՝

Սիրածի ջերմ սրտի պես,

Որ զինվորի ձևոքերում

Դեռ արոփում են տսես:

Նամակները՝ ձյունաթերթ՝

Ճերմակ ճաղկունք հայրենի,

Որ բերում են իրենց հետ

Բույրը ծանոթ գարունի...

... իրիկունն է ծանրանում,

Իշնում հոգնած աշխարհին.

Օտար գաշտեր անանուն,

Օտար լուսին՝ գաշտերին:

\*

Բայց իր կը ծքին է սեղմում  
Զինվորը թուղթն սպիտակ,  
Եվ ասեա քուն է մտնում  
Իր հայրենի՛ հարկի տակ...

14/1 - 45 β.

## Զ Ն Զ ՈՒՄ

Աիրում էիր զու, իսկ ևս անտարբեր  
 Պաղ ժպտում էի քո սիրո վրա.  
 Քնքշությունըդ ինձ թվում էր մի բեռ,  
 Խոսքերըդ՝ ձանձրույթ մի ամենօրյա:  
 Եվ ասացին ինձ, թե ուազմի գաշտում  
 Կովել ես զու քաջ զինվորի նման,  
 Ու, վայ ինձ, սիրո վերքն էլ քո սրտում  
 Օտար հողի մեջ գտել գերեզման:  
 Այն օչից մոլոր թափառում եմ ես,  
 Մեղքի մի հուշ է խրվել իմ սրտում,  
 Մի սրբության եմ դավել ես ասես,  
 Ասես զրժել եմ մի ազնիվ երդում:  
 Դու՝ հայրենիքի նահատակ զինվոր,  
 Տվեցիր սիրաբդ ու կյանքըդ ջահել,  
 Իսկ ես քեզ համար զլացա սիրո  
 Քնքուշ մի ժպիտ անգամ շուայլել:  
 Այս գեթ շիրի՛մըդ գանեի կորած,  
 Վրան զզջումիս արցունքը լայի,  
 Եվ սիրըս՝ կյանքում քեզ չնվիրած  
 Գեթ շիրմիդ, շիրմիդ վրա թափել. . .

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Երբ նայում եմ մեր երկնքին տնտրատ,  
Ուր արեն է խաղաղորեն բարձրանում,  
Երբ նայում եմ նահաղետին Արարատ,  
Որ կանգնած է՝ նորից բարձր ու բարձրանուն,  
Երբ զարթնում են մեր խնկարույր դաշտերում  
Նվիրական հորովհելները հայոց,  
Երբ հասկերն են ոսկիանում արտերում,  
Հեղ խաղողը դառնում գինի, դառնում բոց,  
Երբ լցում են ոստանները մեր զվարթ  
Զահելությամբ և աղմուկով մի անգուսպ,  
Երբ ականջիս կարկաչում է անկաշկանդ  
Հայոց հնոց երգն ու ձիրքը որբասուրբ,  
Երբ նայում եմ մորս՝ խաղաղ ծերացող,  
Տեսնում ծուխը մեր օջախի՝ ծիրանի,  
Լսում, մնց է իմ մանկիկը ոսկեշող  
Ժիր թոթովում աղատ լեզուն հայրենի,  
Թե՛ղ է դառնում իմ հայրացքը հիացքով,  
Քո անունն է իմ սրտի մեջ բարձրանում,  
Բանակ կարմիր, դու որ արդար քո զարկով  
Աշխարհներին փրկության գուռ ես բանում...  
Երթը բարի, հայոց աշխարհը իմ հին  
Թեղնով մնաց շեն ու խաղաղ այս անգամ,  
Ժողովրդիս օրհնությունը քո ճամբին,  
Հայոց բախար դու արծվենի՝ պահապան...

## ԵՐԵՎԱՆԻ ԼՈՒՅՍԵՐԸ \*)

Երեկոն է. շրջում եմ ևս  
Երեանի փողոցներում,  
Երեանում՝ կյանք ու հանդես,  
Նորից լույսեր, նորից գարուն.  
Ու հորդում են կարոտ ու խիճիգ  
Դառն օրերի մթնում սանձած.  
— Ողջույն, լույսեր մեր անձկալի,  
Հարազատներ վերադարձած...

Զեր շողելով հաղարաչյա  
Ռղողվել են սրաերն ասեա.  
Բայց իմ սիրու մթնեց մի պահ,  
Տիրեց, մի մութ փողոցի պես.  
Հեռու ու լուռ մի հիշատակ  
Զարթնեց՝ ծանոթ ձեր շողերից.  
Իմ դեմ ելավ պատկեր մի թանկ,  
Որ եւ չկա, որ կորցրինք...

...Մի տղայի դիմեի ես,  
Թուխ ու զվարթ մի տղայի.  
Հոգում՝ հաղար երազ ու երգ,  
Կըծքում ավյունը ջանելի.  
Իր ձեռքով էր վառել նա ձեզ,  
Փշել ժայռե կամքը լեռան,  
Բանաել ջրի խռովքը վես  
Ու ձեղ բերել էր Երեան:

\*) Թրված լուսաքողարկման վերացման առիթով:

Ու սիրում՝ էր ձեղ սրտագին,  
Մի սիրահար պատանու պես.  
Ու երբ մի օր ոսոխը բիրտ,  
Արդես գիշեր, պարուբեց մեզ,  
Երբ մալոցիք, ու մութ իջավ  
Երեանի փողոցներում,  
Նա ձեզ համար կռիվ գնաց.  
Նա ձեզ համար մեռավ կռվում:

Մեռավ սիրած Երեանի  
Ու ձեր կարուտն՝ իր սրտի մհջ.  
Իր բաղկավ էր ձեզ կյանք տվել,  
Իր արյունով պահեց անշեջ.  
Եվ դուք, լույսե՛ր երախտագետ,  
Որ վառվուժ եք հիմար էլի,  
Զեր շողերով անմար պահեք  
Հուշը՝ ջահել այն աղայի։  
Եվ դու, անցնրդ, անցնե՛ս երբ այս  
Լուսաողող փողոցներով,  
Բարի խոսքով հիշեր նրան,  
Այն աղային հիշեր սիրով,  
Որ իր այլվող սիրտն է դրել  
Ասես՝ պայծառ այս լույսերում,  
Որ լույսերը հավերժ վառվեն  
Երեանի փողոցներում...

1944 թ.

\* \* \*

Լեռները հպարտ վեց են բարձրանում,  
Որ փառքըդ վերև՝ տանեն, հայրենիք.  
Արծիվները վես երկինք են հասնում,  
Որ փառքըդ երկինք տանեն, հայրենիք.  
Հովերն ու հողմերն աշխարհ են շրջում,  
Որ փառքըդ չուս կողմ տանեն, հայրենիք.  
Աղբյուր ու գուսան երգ են կարկաչում,  
Որ փառքիդ գովքը անեն, հայրենիք.  
Իսկ զավակներդ, զավակներդ անդին  
իրենց արյունն են տալիս սրտագին,  
Որ փառքըդ անժամհ պահեն, հայրենիք ..

1942թ.

## ՏԱՂ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Մեր գորգերը՝ ձեր ճամբեքին, մեր ծաղկունքը՝ ձեր ոտքի տակ  
Ու ձեր երթին, ոնց փառքի ջան՝ արարատյան արևը բարկ,  
Ձեր հաղթական վերադարձին՝ մեր երկինքը՝ հաղթակամար,  
Դեպի հնոց երկիր հայոց, հայոց քաջեր, բարով եկաք:

28 Ձեզ են գալի կարոտալի հայոց հովերն ամեն կողմից,  
Ձեզ են փարվում մանկութ ընկեր, ծանոթ գետերը ցնծալից.  
Ձեզնով հպարտ, երախտապարտ՝ հայոց հողը ծաղկել նորից,  
Ձեզ ճամբար է բացել սիրով, հարազատներ, բարով եկաք:

Տեսէք, ձեր թուխ մանուկներն են ձեր դեմ վազում՝ հովերի հետ,  
Աղջիկների հայացքները ձեզ են փնտում երջանկավետ.  
Վշտից ցամքած արցունքը մոր՝ խնդությունից դարձել է գետ,  
Ձեր մայրերի աչքին երնեկ, մոր գիրկը ձեր բարով եկաք...

Եկեք սրբենք այս չորստարվա փոշին հոգնած ձեր ոտքերի,  
Ու համբուրենք սպիտակարթ ձեր թուխ ճակատը զինվորի.  
Ձեզնից տոնենք կարոտն՝ ընկած հարազատի ու ընկերի,  
Այս, ում հարկի տակ էլ իջնեք՝ եղբայրն եք մեր, բարով եկաք

Սեղան բացեք, թող խառնվեն վիշտում, արցունք ու երդ  
Մեր քաջերը կարոտել են հայոց գինուն, գինի բերեք.  
Հաղթողների փառքի համար յոթը գիշեր, յոթը ցերեկ  
Թող զրնգմն նվազ ու երդ, հայոց քաջեր, բարով եկաք...

26/6—45 թ.



\* \* \*

Մեր փողոցում նվազների ձայն է թնդում՝  
Ասում են թե հարսանիք է մի զինվորի.  
Դարձել է նա կռիվներից հայրենի տուն  
Եվ այս գիշերն օրն է նրա երազելի  
Ինձ են հասնում նվազները. սիրտըս հեռվից  
Խառնվում է խնդությանը հարսանքատան.  
Ասես այնտեղ խնճույքի են կանչել և ի՞նձ  
Եվ ուզում եմ բարի մի խոսք ասել սրտանց.—  
—Երջանկություն, ուր էլ լինես, կանչում եմ քեզ-  
Այնտեղ գնա, նոր հարկի տակ այն զինվորի,  
Նա շատ տեսավ ավեր, ցավեր ամենակեզ,  
Կյանքը նրան թող դառնություն էլ չըերի...

22/9—45 թ.

\* \* \*

Սարսում ես ամպրոպից դու ահեղ, լոկ սիրում ես դու ծիածանը,  
Գերում են քեզ գույները շքեղ, լոկ սիրում ես դու ծիածանը+  
Եվ սակայն գիտես դու արդյոք, որ խաղաղ ու խընդուն երկնքում  
Ամպրոպից հետո է միայն ժպտում կենսատու ծիածանը... .

1939 թ.

## ԱՐԱՋՆՈՐԴԻՆ

«Ստալինը ցույց է տալիս խաղաղության  
նախապարհը»

Արտասահմանացն բերքերից

Աշխարհը քեզ է նայում նորից  
Նա, որ ճենց նոր է մահից փրկված,  
Բայց չհագեցած արյուններից  
Ոսկու տերերը եղեռնաբաղձ  
Ճանցել են ուզում նրան կրկին  
Պատերազմների նոր սստայնում.  
Ինչպես երկիրը՝ արեգակին  
Աշխարհը քեզ է ապավինում։

Ու քեզ են նայում զողդոջ մայրեր,  
Որ վերադարձած որդիներից  
Զեն առել անհուն կարոտը դեռ,  
Եվ մանուկներ, որ երջանկալից  
Հոր քաղցրությունն են զգում կրկին  
Ու երջանիկ են ուզում ապրել.  
Ինչպես երկիրը՝ արեգակին  
Աշխարհը քեզ է աչքը հառել։

Երբ դաւ ես հույսի խորքը խոսում  
Ցրվելմ է մութը մոայլաղեմ.  
Քո շուրթից ելած ամեն խոստում  
Մեր մեջ մարմին է առնում արդեն.  
Ու քո հույսով է շնչում կրկին  
Զարթնող այս հողը կենսաշաղախ.  
Փոքր տագնապած այս աշխարհին  
Քո ծխումորմի ծուխը խաղաղ...

## ԵՐԻՏԱՍՏԱՐԴ ՀԱՅՐԵՆԻՔԻՄ

Ողբի հայրենիմ, որբի հայրենիմ...

Հ. Թումանյան

Թեզ կանչում էին ողբի հայրենիք,  
Թո մանուկները գաղթի ճամբեքին,  
Կորած գառների նման լալագին  
Մայր էին կանչում, ու սևավորիկ  
Հայոց մայրերի ողբով խելագար  
Աշխարհն էր լցվել և դրա համար  
Թեզ կանչում էին ողբի հայրենիք:

Թեզ կանչում էին որբի հայրենիք.  
Թո մանուկները՝ անհայր ու անհաց  
Խոժոռ աշխարհի մուժում մոլորված  
Մնացել էին որբ ու թափառիկ,  
Օտարի անփույթ քմայքին՝ ավար,  
Օտարի հույսին և դրա համար  
Թեզ կանչում էին որբի հայրենիք:

Որբի հայրենիք, լոկ Հոկտեմբերը  
Թո տառապանքին բերեց ամոքում.  
Փակեց վերքերն իր՝ քո հողն իմաստուն  
Եվ հողիդ վրա ահա ծաղկել է  
Նորոգ մի սերունդ, որ մոլեգնաբար  
Գիտի տրորվելը, պիտի մոխրանար,  
Նբան չփրկեր թե Հոկտեմբերը.

իմ նոր, իմ հզնը, անկոր հայրենիք,  
Քո որդիները՝ առույգ, կորովի,  
Քո աղջիկները՝ գարուններով լի,  
Նրանք քո հորւյսն են, քո շհւնչը գալիք,  
Որ քո աշխարհին թարմություն բերել՝  
Պատանությամբ են երակը լցըել  
Որ հավելվէ ապրես, հայնց հայրենիք...

10/11- 45 թ.

## ՄԵՐ ԵՐԳԸ

Արամ Խաչատրյանին

Մեր հանձարը՝ հին, մեր երգը՝ անմահ,  
Բայց դար ու դարեր հեկեկում էր նա,  
Մեր լերկ լեռներում, մեր խուլ լեռներում  
Եվ քար աշխարհի ականջից հեռու՝  
Դնում էր, թափվեւմ ու կորչում անվերջ  
Խոր ձորերի մեջ, մութ ձորերի մեջ...

...Եվ փշրվեցի՞ն պատնեշ ու պատվար  
Ու երգը հայոց՝ լեռներից ի վար  
Վարարեց, փարվեց ոռւսական հողին,  
Խառնվեց նըս լայնություններին,  
Խոլ անտառների շառաչի՞ն ձուլվեց,  
Վոլգայի շնչով զորացավ, սնվեց,  
Եվ աշխարհով մեկ հնչում է հիմա  
Մեր հանձարը հին, մեր երգը անմահ...

20/11—46 թ.

## ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ

Մի պայծառ ճամբա, մի զվարթ փողոց  
Շուրթին՝ անունը մեր Արովյանի  
Զգլում է, փովում ծառով, ծիծաղով  
Կանաչ սրտի մեջ մեր Երեանի:

Տխրում է հոգիս՝ իր գիշեկն եմ գնում,  
Երբ ուրախ եմ ես՝ այնտեղ եմ կրկին.  
Երբ մտերմի՝ է սիրտը որոնում  
Այնտեղ եմ գանում իմ որոնածին:

Ու երբ մթնում է իմ միաքը բարի  
Հայոց հինավուրց բախտի մոայլով,  
Ինձ ամոքում է նրա մայթերի  
Կենդանությունը, աշխաւյժը խռով:

Ասես երակն է աշխարհի հայոց,  
Որ բարախում է՝ հավերժ կենդանի,  
Մի պայծառ ճամբա, մի զվարթ փողոց  
Շուրթին՝ անունը մեր Արովյանի...

14/3 - 45 թ.

## ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԵՐԸ

Հզոր է սերը ծնողական  
Եվ անհուն է մոր սերը վերին,  
Բայց գաղանն էլ է կանգնում պաշտպան  
Ու սիրում դեռ թույլ իր ձագերին:

Ու բարձր է, վե՛ր է ու լուսավոր  
Սիրահարների սերը վսեմ,  
Բայց վարուժանն էլ սպում է խոր  
Մարի թռչունի կորուսոը սև:

Բայց ունի հոգին ուրիշ մի սեր,  
Որ բնության մեջ չկա կրկին,  
Այդ մարդու սերն է ողջանվեր  
Դեպի հայրենիքն ու հայրենին:

Չի կապում այստեղ ուժը արյան,  
Ոչ հրապույրի բնազդը հին,  
Այն սահմանել է մարդը միայն  
Բարձունքների մեջ իր մարդկային...

12/11-46 թ.

## ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Քանի՛ տարի մեջլիսներում առաջ ես ասել, Սայաթ-Նովա,  
Քանի՛ տարի դու սրտերի հետ ես խօսել, Սայաթ-Նովա,  
Կարոս բլրուց ամեն գարուն եկել ես դու վարդերի հետ,  
Ու սիրելով, ու սիրվելով՝ մեղ ես հասել, Սայաթ-Նովա:

Դու տաղերում, դու բաղերում, սիրողների թաղումն ես դու,  
Առաջին սուրբ համբույրների լուսաշաղախ շաղումն ես դու,  
Թե որ բեկվեց սիրո համբեն, վառվող սրտի խաղումն ես դու,  
Վառվող սիրու քեզնից է միշտ աղբյուր ուզել, Սայաթ-Նովա:

Սիրո հազար երգ ենք լսել, բայց քո երգը ուրիշ է, չե՛,  
Սիրո հազար վերք են տեսել, բայց քո վերքը ուրիշ է, չե՛,  
Աշխարհը՝ լի գյոզալներով, քոնի տեսքը ուրիշ է, չե՛,  
«Իմ դիրքն ուրիշ գըրեն է»—լավ ես ասել, Սայաթ-Նովա:

Ամեն երգիչ իր քնարին քո սաղից մի լար է ուզում,  
Ամեն ջահել քո գյոզալի նման էշխող յամը է ուզում,  
Ամեն աղջիկ սրտում թաքուն քեզ պիս սիրահամը է ուզում,  
Ուրիշ ով է քեզ պիս սիրել ու երազել, Սայաթ-Նովա:

Զի մեռնի էն ժողովուլդը, որ քեզ նման սիրել գիտի,  
Որ վերքերից երգե՛ր ծնել ու այլվելով՝ այրել գիտի  
Մեր երգերով, մեր բերքերով գար ու գարեր քայլե՞նք պիտի.  
Ու դու մեղ հետ՝ քո քյամանչով գալու ես դեռ, Սայաթ-Նովա:

79-45 թ.

## ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳԻՔՈՐԻՆ

Դու ինձ հուզել ես այնքան իմ՝ մանկության օրերին  
Լուս գերել ես իմ հոգին ու վշտում սուզել,  
Ես զգացել եմ ասես քեզ հետ քաղցը քո լոին,  
Ու մեր տաշտիցը միշտ քեզ հաց տալ եմ ուզել:

Ու թգացել է ինձ միշտ, որ ես է՛լ եմ դողացել  
Քնզ հետ՝ ծեծված անձրևից, ցլտահար ու մերկ,  
Երազիս մեջ էլ անզամ ես քեզ հետ եմ մնացել,  
Ու կանչել էմ տիրածայն «Էստի համեցեք»...

Եվ զտյբութով է լցըել մահղ հոգին իմ բորի,  
Անմեղ, անմեղ իմ սրտում վերքեր է բացել,  
Խուժելով հաշտ լույսի մեջ իմ մանկության աշխարհի,  
Փոքրիկ Գիքոր, առաջին իմ վիշտոս ես դարձել...:

Զ/Յ—36 թ.

## ԵՐԳԸ՝ ԳՄՐՆԱՆ ՄԵԶ

Ասես ինձ հեռավից կանչում են անվերջ,  
Գնում եմ դյութված ականջս ձայնի.  
Քարունը եկել, լցվել սրտիս մեջ,  
Ուզում է փոխվել երգի', հնչյունի':  
  
Փէջում է իմ մեջ խոսքի մի ձնհալ  
Հյուսվում է խոնավ, հողաբույր մի երգ,  
Բայց երբ ուզում եմ ես այն շնջալ,  
Բառերն իմ շուրթից փախչում են բեկ-բեկ:  
  
Փախչում են նրանք, անհետ խառնվում  
Երկնքին, հողին, լեռնն ծաղկավետ.  
Զվարթ բառերըս շուրթիցըս պոկվում՝  
Գնում են ջրի կարկաչների հետ:  
  
Եվ ամեն կողմից մոտի՛կ, մտերի՛մ  
Շշունջ եմ լսում, որ ես եմ երգել,  
Զուլե՛լ է երգըս արար աշխարհին,  
Ու չեմ կարենում աշխարհից պոկել...

12/4—48 թ.

\* \* \*

Հողի մեջ թողած բարեկամիս դին՝  
Ես դառնում էի ճամբով շիրմատան.  
Սրտիս պես թախծող ուղիներն անձայն  
Օրորվում էին տխուր իմ ճամբին:

Կանաչ էր շուրջըս, կանաչ, ծաղկավարդ,  
Շուրջս գարնւնն էր լուրում վերստին,  
Գերեզմանատան պատերից անդին  
Լսվում էր մանկանց աղմուկը զվարթ:

Հայացքս զիսլավ մռայլ մի շիրմի.  
Տեսա՝ քարերի արանքից նրա  
Բուսել էին թարմ կանաչներ շոայլ  
Վայրի կակաչներ ու վարդեր վայրի:  
Ու մահ ու թախիծ արդեն մռացած՝  
Ժպտաց իմ սիրտը՝ խոհով հաղթական  
— Կյանք, դու բղխում ես, դու հորդում ես այս  
Շիրմաքարերի արանքից անգամ...

1941թ.

## ԱՐԵՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Արե՛, արե՛, արե՛,  
Հայաստանի արե՛,  
Անզուդական արե՛.  
Երդվել էի հավերժ  
Որ չերգեմ էլ քեզ,  
Որ փրկըվես մի քիչ  
Պոետների ձեռքից,  
Բայց գերում ես նորից,  
Բայց այրում ես նորից,  
Ամեն տողից հետո  
Դու խուժում ես նորից.  
Զէ՞ որ դու մեր մեջ ես,  
Դու մեր հոգի մեջ ես,  
Մեր մրգերի, գինու,  
Մեր խաղողի մեջ ես,  
Շողա, թափոլիք, լցվիք  
Երգերի մեջ մեր բոց.  
Առանց քեզ ի՞նչ անի  
Բանաստեղծը հայոց.  
Արե՛, արե՛, արե՛,  
Հայաստանի՛ արե՛,  
Անզուդական արե՛,  
Հավերժական արե՛... .

## ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

Աշխարհ եք իջնում հայոց լեռներից  
Հայոց լուսեղենն աղբյուրների նետ,  
Եվ բիրլիական այս հողը նորից  
Զեր մատադ շնչով մանուկ է հավետ:

Դուք մազեր ունեք՝ Արագ են ասես,  
Թափվում հն, թափվում ու չեն ծովանում,  
Դուք աչքեր ունեք՝ Վանա ծովի պես,  
Ով որ նայում է՝ կարոտ է մնում:

Կեսօր է իջնում ծաղկիս թերթերին,  
Դուք՝ ցողաշաղախ բողբոջ վաղորդյան,  
Ճերմակ սպի կա արդեն մազերիս,  
Դուք թուխ, թխահեր՝ դեռ բուրում եք թարմ:

Բայց ծաղկեք, ծաղկեք, հայոց աղջիկներ,  
Ամոքեք հողիս ծեր սիրտը խոռվ.  
Եվ թող բարախեն փողոցները մեր  
Զեր զեղեցկությամբ, ձեր գարուններնվ:

Կարկաչեք, իջեք հայոց լեռներից,  
Թովչանքնվ լցրեք հոգի ու աշխարհ,  
Թեև ձեր դալար թողքը տեսնելիս՝  
Սիրտը դողում է սիրածիս համար...

## ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՐԳ

Աչք ենք բացել Երևանում, նա մեզ և մայր, և օրորան,  
Հեռվից-հեռու շուշը է արել մեզ Մասիսը սիրագորով.  
Ասես ծնված մի հարկի տակ՝ մտերիմ ենք դարձել իրար,  
Ե՛կ, թափառենք Երևանի մանկութ ընկեր փողոցներով:

Տե՛ս ծառերը այս նորուղեշ, նրանք մեզ հետ հասակ առել,  
Մեր դպրոցի ծանոթ ճամբին հով են արել մանուկ մի օր,  
Հիմի սիրո մեր գաղտնիքին հովանի՛ են արդեն գառել,  
Ե՛կ, թափառենք Երևանի սիրո ճամբաս փողոցներով:

Ահա շենքերն այս վարդաբուխ, նայիր, ոնց է շունչը հայի  
Ոզի տվել այս քարերին՝ աշխարհաշեն իր հանճարով.  
Խտղող ու նուռ, ու եղնիկ է դարձել այստեղ ժայռը վայրի,  
Ե՛կ, թափառենք Երևանի հայրենառ փողոցներով:

Զանգու իջնենք, նա՝ ձորերում բարախող սիրո ու սրտակից,  
Ուր էլ լինենք, թե օվկիմն էլ մեր գեմ շաչի հուզախոռով,  
Նրա ձայնը մեզ կհասնի հաղար սարի, քարի տակից,  
Ե՛կ, թափառենք Երևանի Զանգու տանող փողոցներով:

Թե հուր ունենք, ջնուր էլ ունենք՝ այրվողներին զով ու աղբյուր,  
Թե շող ունենք, նորք էլ ունենք՝ մրգի սինի, մրգերի ծով,  
Մեղ են կանչում այդիներից հայոց տաղերը գիներույր,  
Ե՛կ, թափառենք Երևանի այդի տանող փողոցներով:

Ե՛կ, թող քամին փոշի ըերի, փոխի թող մեր ճանապարհին,  
Թող մենք այրվենք շողին, տապին՝ մեր արևի անմար հրով,  
Միայն նայենք ու աչքը մեր միշտ դեմ առնի Մասիս սարին,  
Ու ծերանանք Երևանի փողոցներում թափառելով...

## ԶԱՄԲՈՒԼԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ ԱԼՄԱ-ԱԹԱՅՈՒՄ

Մենք եկել ենք այստեղ հեռուներից անվերջ.  
Ի՞նչ վիթխարի ճամբա, ասես իրավ  
Մեր այս հողի համար ինքնաթիռը ծնվեց,  
Որ մեզ առավել հեշտ կապի իրար։  
Ու մեկտեղ ենք հիմա, ըերած մեր աչքերում  
Մանկությունից սովոր տարբեր հորիզոններ՝  
Մենք խոսում ենք ասես իրար գիտենք վազուց  
Եվ կամ իրար վաղուց ենք որոնել։  
Մենք՝ հոծ, բազմալեզու, մեր երկիրը՝ անծայր  
Թեև եղբայրության մենք նույն խոսքն ենք խոսում,  
Բայց եղբայրներ, մենք ճնշ հառկանայինք իրար,  
Ասե՞ք, թե չիներ սուսաց լիզուն...

10/7—46 թ.

Ալմա-Աթա

## ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Ինձ ծանոթ է թվում այստեղ ամեն մի լեռ,  
Հաբակամտ է այստեղ ամեն մի բան.  
Ասես Հայաստանից մի կտոր են պոկել  
Ռւ բերել են այստեղ՝ Դադախատան:  
Ո՞վ կաբող էր խորհել, որ միակե՞րպ, տարսում  
Ավազներից հետո, որ անվերջ են թվում,  
Պիտի բացվեր մեր գեմ փարթամ Ալմա-Աթան,  
Զվարթ մի օազիս՝ անապատի հրում:  
Ռւ քայլում եմ ահա այս մայթերով վերձիզ,  
Փողոցները ասես արձակ ծառողիներ,  
Նոր ու ճերմակ շենքեր՝ մտերմորեն գողարիկ  
Կանաչների միջից ողջունում են ինձ գեռ:  
Ռւ թվում է վաղուց ևս տեսել եմ արդեն  
Այս լայնաղեմ, նեղաչ, ժպտուն անցորդներին,  
Այդ Զամբուլի երգից արդյոք նրանց զիտեմ,  
Թե դեռ մայրս է վաղուց պատմել նրանց մասին:  
Այդ ինձ հետ է ծնկել մտերմությունը այս,  
Պայքարներով, կամքով, արյամբ սրբագործիւ.  
Նրա համար կերչում հայ զինվորը ընկալ,  
Ռւ ես այս մայթերով բարձրանամ վեր:  
Ռւ քայլում եմ ահա. խորթ չէ հարավունուս  
Այս արեց, այս շող խենթությունը ամուն,  
Մինչ ծեր Ալա-Թառւն\* ձյունաշխարհից իր լույս  
Ի՞նձ է նայում՝ իմ հայր Արարատի նման...

6/7-46 թ.

Ալմա-Աթան.

\* Հավերժածյուն զազաթ, որի հայացքի տակ տարածվում  
է Ալմա-Աթան:

## ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ ԻՆՔՆԱԹԻՌԻՑ

### 1. Լ Ե Ռ Ն Ե Ր Ը

Ահա երկինքը, որին անհաս  
Ես լոկ երգել եմ ու երազել,  
Հիմա ես ի՞նքս եմ այնտեղ հառել,  
Հիմա ես ի՞նքս եմ ասես երազ:  
  
Եվ այս լեռները, նրանք միայն  
Վերից են սովոր նայել մարդուն,  
Հիմա փովել են այնտեղ՝ դաշտում  
Մանկացած, փոքրիկ, անօդնական...

Դիզվում է ամպը, օ՛, այդ նրանք  
Լեռներն են ասես ծածկում իրենց,  
Որ ես չտեսնեմ ոնց են իրենք  
Խոնաբնված փովել իմ ոտքի տակ...

12/6--46. թ.

Երեան—Մասկվա

### 2. ՀՈՂԻ ԿԱՐՈՏԸ

Ամպերը, ամպերը, դիզվել են ամպերը,  
Անձիր են, անձայր են, անհուն են, անվերջ-  
Թվում է երկիրը առավետ կորել է,  
Ու մենք որբացել ենք այս երկնքի մեջ։  
  
Թռչում է, սուրում դեռ անփույթ ինքնաթիռը,  
Եղյամը սառել է թերթին, վրան։  
Մրսում ենք, տիրում ենք, ու չկա երկիրը,  
Ամպերը, ամպերը, ամպեր անսահման։

Ու հանկարծ ճեղքից մի, ուր նոսր են ամպերը,  
Հողի մի կտոր է վարից երեսմ,  
Կարոտած նայում եմ, անծանսթ այդ հողը  
Ծննդյան վայրին պես հարադար է թվում...

5/7-46 թ.

Մոսկվա—Ալմա-Աթա

### 3. ԻՆՔՆԱԹԻՌՈՒՄ

Եվ քաշ տալով կողքից բեռով տոպրակը իր՝  
Մի գյուղացի ղազախ ինքնաթիռ է նստում.  
Երկնքում ենք արգեն, մինչ հս հետաքրքիր  
Դեռ նրան եմ նայում ու զոհությամբ ժողովում...  
Օ՛, գիցական իկար՝ ողբերգորեն խիզախ,  
Ոլխմպիական բարձրից քո գարավոր փառքի  
Կարող էիր խորհել, որ քեզ պիտի հաղթի  
Լայնամորուք ժպտուն մի հռղմաբույլ ղազախ...

12/7-46 թ.

Ալմա-Աթա—Մոսկվա

## ԵՐԱԶՄՆՔ ԶԱՆԴՎԻ ԱՓԻՆ

Ես ուզեցի որ լինեմ քեզ հետ...  
Այնտեղ՝ վերեռում, փողոցներում  
Գարնան մի խինդ է գեռ վարարում,  
Ու ես տիբրուբախ անցա այդ խենթ  
Երթերի միջո՞վ տարերային  
Եվ իջա ձորը . . . . .

Այս օրերին  
Դեռ կիսավարտ էր կամուրջն այստեղ.  
Երբ գրքերի մեջ աշխարհաստեղ  
Հոգնում էր մեր միաքն ու մեր հոգին,  
Ու երբ խոհերի փոշին անքուն  
Նստում էր հոգնած մեր ուզեղին,—  
Մենք գալիս էինք դեպի Զանգու:  
Դեռ կիսավարտ էր կամուրջն այստեղ.  
Ու թափված էին դեռ ցան ու ցիր  
Քարեր, ավաղներ, երկաթ ու կիր  
Գետի ափերին և ամեն տեղ:  
Մենք սիրում էինք մինչեւ գիշեր  
Նստել գետափին ընկած քարին,  
Որ կիսատաշ էր և տակավին  
Վարպետի աչքից հեռու էր դեռ:  
Մարում էր օրը: Արևն ահա  
Հոգնած, խանձված քարտաշի պես  
Իր տունն էր դառնում: Երկը վրա  
Մթան փոշին էր նստում անտես:  
Ու մինչ երեկոն դուրս էր բերում  
Սիրահարներին իրենց տնից՝  
Կարգելով լուսնին՝ իբր ուղեկից.

Սենք այստեղ էինք արդեն, ձուռում,  
Նստած այն քալին նվիրական,  
Որ երջանկության քար էր դարձել  
Երազում էինք մենք ապագա  
Օրը լուսավոր, որ դեռ անձն  
Ցնորքի պե՞ս էր մեզ երևում...  
...Ահա ձգվում է դեպի հեռուն  
Նոր Երևանը, Ահա մեր դեմ  
Կամուրջը՝ հզնը, երկաթաղեմ  
Արդեն ավարտված, արդեն կանգնեն:  
Ու թվում էր մեզ ահա մեկանը  
Մենք այդ կամուրջով անցանք Զանգուն:  
Թվում էր՝ բացվեց մեր դեմ շքեղ  
Մի պատկեր շռայլ, հեքիաթային...  
Այդ Երևանն է, որ տիրաբար  
Աճե՞լ, փովե՞լ է դետից անդին,  
Ծաղկել են ժայռեր՝ ու առապար՝  
Դարձել այդինե՞լ, ծաղկանոցնե՞լ,  
Ահա պալատներ զարդաքանդակ  
Եվ սյունաշարե՞ր մարմարիոնե,  
Եվ լույսե՞լ, լույսե՞ր ու նրանց տակ  
Այդ մենք ենք քայլում՝ ալբած, թեթե՞վ  
Մի ճանապարհով, որ անընդհատ  
Թվում է ձգվում, ձգվում է դեռ  
Հեռու, մինչ Արաքս ու Արարատ...

Երջանկությունը ինչու է միշտ  
Անցնելուց հետո՝ կրկնապատկվում.  
Այն քարի վրա և խինդ, և վիշտ,  
Ամենը այնպես քաղցր էր թվում,  
Եվ այնպես պարզ էր, հասկանալի  
Աշխարհը, կյանքը, այնպես պայծառ,  
եւ ինչու, ինչու, իմ սերելի,  
Դու գնացիր ու հա չդարձար...  
... Ախ, հս գիտեի, ես գիտեի,

Ար դու ընկե՛լ ես, որ դու չկառ,  
Սակայն թվում էր դեռ ինձ էլի,  
Որ մի հրաշքով դու ետ կդաս,  
Երբ հաղթանակի օրը բացվի.  
Այդ սպասման մեջ աշխարհային  
Վիշտը սուզվո՞ւմ էր . . .  
Սակայն ահա

Այդ օրն էլ եկավ: Թվաց մի պահ  
Կենդանությո՞ւնդ է սադիոն ձայնում  
Այդ համբավի հետ աշխարհանուն.  
Կանգնե՛ց իմ սիրաը երջանկահար,  
Թվաց գալե՞ս ես, թվաց եկա՞ծ.  
Իսկ հետո, հետո . . .

### Մայրը լոփին

Ահով նայում է իմ տչքերին.  
Նա դեռ պահո՞ւմ է: պահում ձամբադ,  
Նա դեռ չգիտի . . . Ես աննկատ  
Թողեցի տունը: Փողոցներում  
Գարնան մի խինդ է դեռ վարարում.  
Ու ես տիրուբախ անցա այդ խինթ  
Երթերի միջո՞վ տարերային  
Եվ իջա ձորը . . .

### Այն օքերին

Դիու կիսավարտ էր կամուրջն այստեղ.  
Հիմա վովել է նա նորագեղ՝  
Արդեն ավարտված, արդեն կանգնեն.  
Ու թեև նույնն է, նույնն է Զանգուն,  
Բայց չկա քարը, քարն այն՝ անդարձ  
Մեր ջաճելության, մեր անուրջի.  
Շարել են նրան, ո՞վ իմանա,  
Ո՞ւ կամարի մեջ այս կամուրջի . . .

Սիրո թովչանքը ինչո՞ւ է միշտ  
Կորուստի ցավով կրկնապատկվում.  
Մեր մեջ պարկում էր ասեն մի սիրո,

Մեզ նույն երազն էր թևավորում.  
Մեկտեղ՝ աշխարհը հաշտ էր, բարի,  
Մեկտեղ՝ թվում էր բախտը անվե՛րջ,  
էլ ինչո՞ւ, ինչո՞ւ, իմ սիրելի,  
Դու կորար կերչի ջրերի մեջ...  
Թող ուրախանմն դեռ քաղաքում.  
Ինձ այստեղ լավ է, այստեղ Զանգուն  
Տանժում է արցունքն իմ աչքերի...  
Սակայն տեսնում եմ ահա վերից  
Մանուկներ շարքո՞վ, մանրատոտիկ  
Դեպի կամուրջն են գալիս մոտիկ,  
Լցվում է ձորը գալայներով,  
Երգում են անմեղ, անհոգ մի երգ.  
Ես մոտենում եմ, գրկում սիրով  
Մի թուխ աղջկա, որ զարմացել՝  
Իմ արցունքին է նայում ահով.  
Ների՛ր, ների՛ր ինձ, իմ բախտավոր,  
Որ մոայլում եմ մանուկ հոգիղ,  
Վազբը, միացիլ ընկերներիդ...  
— Օ՛, լուսավորներ, օ՛, մանուկներ,  
Դուք զգմբթ անցեք այս կտմուրջով  
Դեպ այդիները ..


Օ՛, ես գիտեմ,  
Կգա լուսեղեն, պայծառ մի օր,  
Երբ կյանք կդառնա ձեզ աշխարհում  
Այն ամենը, ինչ կարոտագին,  
Մենք երազեցինք այս գետափին,  
Այն, ինչ մնաց մեր երազներում...  
... Եվ կճոխանու հեքիաթային

Նոր երեանը, որ տիրաբար  
Կաճի՛, կփովի՛ գետից անդին,  
Կծաղկեն ժայռեր ու առազար  
Դարձած այգինե՛ր, ծաղկանոցնե՛ր,  
Շուրջը պալատնե՛ր զարդաքանդակ,  
Եվ սյունաշարե՛ր մարմարիոնե,  
Եվ լույսե՛ր, լույսե՛ր ու նրանց տակ

Թուլս պատանիներ ու աղջիկներ  
Կըջե՞ն ձամբով այն ծառազարդ,  
Ար ձգվելու է դար ու դարեր  
Հեռու, մինչ Արաքս ու Արարատ...

Օ՛, բախտավորներ, օ՛, սերունդներ,  
Դուք եկե՛ք, անցեք այս կամուրջով  
Դեպի վայելքի ափերը ձեր,  
Դեպի գալիքը հաղարաթով,  
Թեև այն քմբը, քարն այն՝ անդարձ  
Մեր ջահելության, մեր անուրջի  
Կորավ՝ շարվելով, մվ իմանա  
Ո՞ր կամարի մեջ այս կամուրջի...

12/5-40 թ.



## ՄԱՅՐԵՐ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ

Ու քայլում ենք մայր ու տղա  
Այս ճամբեխավ հազարամյա..

Digitized by Google

Digitized by Google

## ԱՅՑՐԻԿԻՍ

Վաղ թառամեց սիրուդ գարունը, մայր իմ,  
Անփույթ մտնը ոերբեք տարավ, շնչա տարավ,  
Ու միայն ես մնացի քեզ մտերիմ,  
Ռպես կորած սիրո մի հուշ, հին մի ցալ:

Նոր բողբոջած ուսին ջանել հառակիդ  
Օրորոցիս վրա թեքված՝ ծերացալ.  
Դու չուզեցիր ուրիշ մի ոեր, ուրիշ խիսդ  
Ազրյուր՝ լինի քո ճյուղերին չորացած...

Դրսում կյանքն էր հմայքներով կարկաչում,  
Սիրող զույգեր ու երազներ սիրավառ,  
Դու ինձ գրկած՝ օրոր էիր մրմնջում՝  
Մոռացած ոեր, ու երազներ, ու աշխարհ:

Ու մեծացա գնով ջանել քո կյանքի,  
Աշխարհ մտա՝ սիրոս անխոց ու պայծառ.  
Ու հասկացած չարն ու բարին աշխարհքի՝  
Մայր, ախրում է սիրող սիրալս քեզ համար:  
Եխ, բնչ տամ քեզ, բնչ նվիրեմ քո սիրուն,  
Ի՞նչ կա կյանքում հատուցումի արժանի,  
Գիտեմ, ես եմ քո աշխարհը՝ աշխարհում,  
Ինձ հետ ես զու հյուսել հույսերդ հիմի:

Մայր, ինձ համար փառք չեմ տենչում կյանքի մեջ,  
Բայց կուզեի՝ զոհողությանը անհառ  
Լինել արժան, լինել հերոս, լինել մեծ,  
Որ քո կյանքը, կորած կյանքը չափուսնա...

## ԻՄ ԱՌԱՋԻՆ ԵՐԳԸ՝ ՏՂԱՅԻՍ

Բազեն ու եկամ, ուրդիս լոեցավ  
Ռազմի երգերի ձայնավ լնեցավ.  
Ռ. Պատկանյան

Թեղ ծիածանը պիտի գուրսուրեր,  
Ու քեզ քուն բերեր հեքիաթն արտուախ,  
Բայց շանթն է ճայթում օրոսքիդ վերև,  
Վրադ սավառնում բաղե՛ն երկաթի...

Խմացիք տղաս, թշնամին է այդ  
Խոռվել արգար քունըդ գեռ մանկուց.  
Արդ, մանուկ միտքըդ թող չմտանա  
Օրերն այս անցած ու պատգամն իմ սուրբ.

Թող իմ կաթի հետ հուրն ատելու թյան  
Քո հեղ արյան հետ խառնվի՛, վառվի՛.  
Մեծացիք՝ չարին ու բարուն դիտակ,  
Մեծացիք որպես կարիք անառիկ.

Բաղե՛ն թող լերի քո աչքերին քուն,  
Քնիք շանթերի, որոտների մեջ.  
Մանկնեց սովորիք ատել թշնամուն,  
Բանգի նա մանկուց կյանքըդ խոռվեց...

1941 թ.

## ՊԱՏԵՐԱԶՄ

Խաղաղության է իջել քո սոկեղեն օրոցքին,  
Խաղաղության թեի առակ գու քնել եռ անխռով,  
Այսպես անդո՞րր է ննջում մեղմ ժպիտը քո դեմքին,  
Եվ ժողոտիդ պես այսօր անդորրած են հող ու ծով:

Շուրջըդ խաղաղ է այսպես, ու սյուզն անգամ չի շնուր,  
Վախինում է խոռվել քո հանգիստը մանուկի.  
Առուն՝ կարկաչն իր առած՝ ահով հեռու է փախչում,  
Սրտում հառաջն է խեղդում մռտիկ ուսին դետակի  
Ահա թռավ գեղի քեզ՝ քեզ խաղընկեր մի թիթեռ,  
Ուզեց խաղալ ծաղկանց հետ աչկանելի ու կոսույտ  
Տեսավ՝ փակված են նրանք, թռավ, գնաց քնքշաթե  
Նա էլ չուզեց վրզովել խաղաղությունը անփույթ:

Եվ եռ՝ քո լույսու քո անմեղ օրոցքի մոտ ծնբաղիք  
Խորհում եմ լուս ու ցավով, — օ, այս պահին, երբ տհա  
Քեզ կարթեցնելը անգամ թվում է բիբա մի ոճից  
Ո՞նց են նրանք կարենում սուր բարձրացնել քո վրա...՝

## ՆԱՀԱՆՁԻ ՕՐԵՐ

Եկ, իմ պայծառ երեխա, սիրտս տիսուր է այսօր,  
Հոգիս լեցուն է ցավով, եկ, իմ փոքրիկ սրտակից.  
Այնաեղ առաջ է սողում դեռ սառիսը արնածոր,  
Մերոնք թողել են այսօր իրենց դիրքերը նորից...

Եկ, սեղմեմ քեզ. իմ կրծքին, քեզնից կարոտըս առնեմ  
Մեր կորցըսած հողերի, մեր զոհերի սրախող.  
Այսօր դո՛ւ ինձ դարձիր մայր, փայիր շնչով ինձ քո ջերմ,  
Դու իմ փոքրիկ արեգակ՝ լոկ ինձ համար ճառագող:

Բայց դու ժպտում ես, մանուկ, դու ծիծաղում ես կրկին,  
Այդ իննդությանն է նսրից քո աչքերում ճառագում.  
Արդմը ես դու, դու անմեղ, միտքը՝ անխառն տակավին  
Անդիտության լույսի մոջ՝ ճշմարիտն է դուշակում...

Եթե մի մութ հրաշքով մարեն ոբտում իմ հրկեղ  
Հազարալույս ջահերը մեր հաղթության հավատի,  
Նրա համար հենց միայն, որ դու ժպտում ես այդպես,  
Ո՛, հենց դրան համար ես կհավատամ մեր բախտին...

1942 թ.

## ՕՐՈՐՈՑԻ ՄՈՏ

Դու՝ լույսերի մեջ քնած մանուկ,  
Դու՝ սենյակ մտած արևի շող,  
Դու՝ գեռ աչքերից չընկած արցունք,  
Դու՝ ամպի ծոցում թագնված ցող,  
Դու՝ ձյունե՛, դու՝ ձյուն, դու՝ ձնծաղե՛կ,  
Դու՝ երկիր չիջած երկնային հուր,  
Դու՝ լուսե՛, դու՝ լույս, դու՝ լուսաստղե՛կ,  
Դու՝ այդպիս մաքո՞ւր, մաքո՞ւր, մաքո՞ւր:  
  
Լցվել է աշխարհ, երկիր ու ծով  
Քո այդ ամոքիչ մաքրությունով...

1941 թ.

\* \* \*

Այդ մանկության երգն էր նորից  
իմ ականջին կանչեց քաղցրիկ.  
Այդ աղբյուրն էր դեմի սարից  
Դեմը ելավ, ժպտաց մանրիկ.  
Այդ ծաղկունքն էր հաղարազարթ  
Ոտքերիս տակ փռվեց կրկին.  
Այդ հայրենի հնձն էր մարմանդ  
Եկավ—դիպավ իմ ոտքերին.  
Երբ տուն դարձա՝ մանկիկս էր ոտք  
Վաղեց, փարփեց իմ փեշերին... ○

18/7-45 β.

## ՄԱՅՐԱԿԱՆ

Եմ իհասկանա, ով մայր է եղել,

Թե ով է այսօր երջանիկը,

Առաջին անգամ ինձ ջուր է բերել

Այսօր իմ փոքրիկ Արայիկը:

Թող օրհնվի՛ ողջ ցավերն իր աված,

Անքուն դիշերներն ու աանջանքը

Թեկուզ մի բաժակ այս ջրի՛ համար,

Որ բերել է ինձ Արայիկը...

9/10 - 46 p.

## ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ

1

Ծաղկաձորում, Ծաղկաձորում  
կանաչ անտառն է օրորվում...

Ծաղկաձորում մել ճամբարն էր,  
Պիռներական մեր աշխամբն էր.  
Մենք մանուկներ՝ տղա~աղջիկ,  
Կարմրավղկմալ, ստարորիկ.  
Մեր վրանը՝ երկնքի տակ,  
Մեր օրերը՝ խաղ ու զնդակ,  
Մեր վայելքը խարհւյկն էր մեր.  
Ա՛խ, ողջը հուշ, ողջը գիշեր,  
Ուր վառվում է իմ գեմ աղոտ  
Խարույկը գեռ, ու նրա մոտ  
Ես մի փուրիկ, փոքրիկ աղջիկ՝  
Կարմրավղկմալ, ստարորիկ...

2

Ծաղկաձորում, Ծաղկաձորում  
Ամռան անտառն է օրորվում...

Բարձրանում եմ այս սարն ի վեր  
Դանդաղաքայլ, մտասիեռ.  
Իմ հետ՝ ձեռքը ամուր բռնած  
Իմ մանկիկն է քայլում կամաց.  
Մեկ գերվում է մոտիկ ծաղկուկ,  
Վաղնւմ, քաղցւմ է բերկանքով,

Մեկ թիթեռն է նրան թովում,  
Ճիշտ նրան է հետեւում,  
Հետո հոգնած՝ դառնում է ինձ,  
Բոնում է իմ ձեռքը նորից,  
Այս ճամբեքով հազարամյա...  
Այս ճամբեքով հազարամյա...

3

Մաղկաձորում, Մաղկաձորում  
Համերժ անտառն է օրոլովում...

119 - 45 թ.

## ՀԱՅՈՅ ԾՈՒԽԸ

Թողել է տատըս իր տունն ու այգին,  
Ու հին իր հարկից իր սիրուը պոկած,  
Սարսափած ու որբ իր մանուկներին  
Հրդեհից, մահից հազիվ ազատած,  
Կիսամերկ, բորբէկ՝ մի մութ գիշերով  
Դաղթի ճամբան է բռնել՝ արյունի.  
Եսևում՝ փայլը սկ յաթաղանի,  
Դեմը՝ Արագի ջրերը խռով...  
Ու մինչև օրս էլ՝ խղճալով նրան  
Մենք չենք հարցնում, թե ո՞նց է եղել,  
Որ իր Արծրունը՝ իր փոքրիկ աղան  
Դաղթի ճամբերին կորել է, մեռել...

Տնկել է տատըս մեր դռան դիմաց  
Պահել, փայփայել մի նոր թթենի,  
Որ միշտ նայելիս՝ իր վաղ կորցրած  
Այգու կարոտը նրանից առնիւ  
Ճյուղեր է տվել թթենին արդեն,  
Ծխում է նորից շուքի տակ նրա  
Օջախը տատիս, ու շուքը պարթե  
Որդիներ, թոռներ ու մի թուխ տղա.  
Իմ մանկին է դա, խաղում է, ճշնում:  
Գրկում է նրան տատըս ծերունի,—  
«Ճամտ, շատ կսիրեմ էսա չար լաճուն,  
Ա'լի, իմ Արծրունին շատ կնմանի...»

## ԱՄՊՐՈՊԻՑ ՀԵՏԾ

Երա՞զ ես տվել դու իմ կյանքին,  
Ու երազներիս տվել ես կյանք...



## ՍԻՐՈ ԵՐԳ

Թե ես չեմ սիրում, չեմ սիրում քեզ,  
ինչու է ձմեռն այսքան գարուն,  
Զմոռն արել՝ այսքան այլում,  
Անխոս երկինքը՝ այսքան անհուն,  
Թե ես չեմ սիրում, չեմ սիրում քեզ:

Թե դու չես սիրում, չես սիրում ինձ,  
Հապա ինչու են ձեր փողոցում  
Այդքան սիրով ինձ ճամբա բացում  
Անցորդներ, տներ, մայթեր ու ձյուն,  
Թե դու չես սիրում, չես սիրում ինձ:

Ու թե չենք սիրում մենք իբարու,  
ինչու են աստղերն այսքան անթիվ,  
Այսքան գեղեցիկ գիշեր ու աիվ,  
Աշխարհը այսքան հաշտ ու ազնիվ,  
Եթե չենք սիրում մենք իլորու...»

7/2—45 թ.

## ՍԻՐՈ ՊԱՐԳԵՎՆԵՐ

Այդ դու ես տվել ինձ աշխարհում

Այս գարունները, իմ սիրելի,

Շռայլումներն այս գարնանային

Այս ծաղիկները հաղաքանուն

Այդ դու ես փռել այս գաշտերին:

Այդ դու ես շաղել ծաղիկներին

Մարդարիաններն այս ցողաշաղախ,

Եվ այս թախիծի գանձը խաղաղ

Այդ դու ես փռել երազային

Զարթնող աշխարհում առավոտ վաղ:

Այս աղբյուրները՝ արծաթ ու պաղ

Դու ես բխեցրել իմ ընթացքին.

Պարգևել ոսկի՝ արեգակին,

Կյանքը դարձրել շող ու ծիծաղ

Ու փռել ողջը իմ համբեքին:

Եվ այս երկինքը ու իմ հոգին

Այդ դու ես լցրել աստղերով բարկ.

Տվել աստղերն ինձ, որպես մանյակ.

Երազ ես ավել դու իմ կյանքին,

Ու երաղներիս ավել ես կյանք ..

Իսկ գու, գու հեռու և անտեղյակ

Յաղում ես անհճզ, անփույթ, անփայլ,

Անցնում ես կյանքով թեթևաքայլ

Ու չդիտես էլ որ երկնի տակ

Այդքան հարմատ ես, այդքան շոնջլ...

\* \* \*

Երբ դու իս ինձ ուղեկցում,  
ինձ միլ տան վիշտու ճամբան  
թվում է մարմար ու ձյուն,  
ինձ գորգ է թվում գարնան.  
Ճամբեքը՝ հեռու, հեռու,  
Աշխարհը՝ անծայր ու լայն,  
ինչու է, ինչու, ինչու  
Մեր տունը մոտիկ այսքան...

143- 45 թ.

## ԳԱՐՆԱՆ ԵՐԵԿՈ

Գարունը ինձ դուրս է կանչում,  
Ի՞նչ երեկո արքեցումի,  
Շուրջըս սուզվել է անուրջում  
Սշխարհն՝ ասս մի պատանի:  
Ճամբաններն են ձգվում սարին՝  
Օծված լուսնի կաթնալույսով,  
Իրենց կանչում սիրահարին  
Դեպի հեռու լանջերը դով:  
Վերում աստղերն են քչփչում,  
Անց խավարում սիրահարներ,  
Աւ կանչում է առուն, կանչում,  
Ինչ որ մեկի կանչում է դեռ:  
Հովը սեր է շրշում կամաց  
Ծաղիկներին, թփիկներին,  
Աւ ծաղիկներն անէացած  
Օրորվում են դետափերին:  
Վերում, վարում և ամեն կողմ  
Լույս է, երանդ, ուրի է հիմքի.  
Ամսարս, ավանս այս երեկոն,  
Որ առանց բեզ պիտի անցնի...

30|6—45 |թ.

\*

Դու վայրի ժայռի ծայրին  
Քմահաճ կակաչ լինես,  
Ես նայեմ, նայեմ վարից  
Ու քեզնից կարստ մնամ.  
Դու խորունկ, խորունկ ձորում  
Ինձ կանչող կարկանձ լինես,  
Ես անզոր նայեմ վերից  
Ու քեզնից ծարավ գնամ:

Դու ծավի ծովի ծոցում  
Մարգարիտ քարը լինես,  
Ես անհույս նայեմ ափից  
Ու քեզնից անմաս մնամ.  
Դու հավերժ մատ ու հեռու  
Մեր Մասիս սարը լինես,  
Ես նայեմ, այրվեմ անվերջ  
Ու քեզնից անհաս մնամ...

20/2-45 թ.

## ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉ

Հոգնած ձյուները քեզ սպասելով՝  
Քո հուը կարոտից հալչում են, արի.  
Սիրող աստղերը մինչև առավոտ  
Ճամբար նայելով՝ հանգչում են, արի.  
Անտառներն իրենց ճյուղերը պարզած՝  
Հազար ձեռներով կանչում են, արի.  
Ջրերն աշխարհում քարեքար ընկած՝  
Հուզված ու խոռով՝ կանչում են, արի.  
Ազխարհն ինձ համար մի կանչ է թոյիկ.  
Բոլոր ձայներով կանչում է «արի»... .

27/9—25 թ.

## ԵՐԵՔ ՊԱՐԳԵՎ

(ԽՍՊԱՅԱԿԱՆ)

Հին մի կիթառ ուներ նա  
Պատահին այն լուս,  
Փողոցներում հնամյա  
Երգում էր ախուր.  
Կարոտի երգ էր երգում,  
Բախտն իր անսփոփ,  
Առավոտից իրիկուն  
Թափառիկ ու որբ:

Ու մոտեցան պատահուն  
Երեք աղջիկներ.  
Երեք հրաշքը ահանուն,  
Երեք ծաղիկներ,  
Երեք աստղեր զիշերի  
Լույսում ցերեկվա,  
Երեք ցոլքեր աստղերի  
Մայթերի վրա:

Տեսավ, տեսավ պատահին,  
Սիբաը խլրտաց,  
Ու աչքերը տրտմագին  
Խոնարհեցին ցած.  
Դողմաց տենդոտ ձեռքերում  
Կիթառը նորից,  
Ու երգեց նա իր անհուն  
Կարոտ երգերից...

Աւ լսեցին պատահուն  
Երեք աղջկեկներ,  
Երեք հրաշք անանուն,  
Երեք ծագիկներ.  
Ճողեր իջան աչքերի  
Կապույտ թերթերին,  
Մինչդեռ երգում էր էլի  
Տղան մայթերին:

Աղջկներից մեկը լուս  
Ժպիտով իր ջինջ  
Իր մատանին ոսկեհուս  
Տվեց երգիչին.  
Մեկը հանեց նազելով  
Օղը փիրուղե,  
Քնքուշ, քնքուշ ձեռներով  
Տղային պարզեց:

Չուներ մյուսը ոչ օղ,  
Ոչ էլ մատանի,  
Բայց մոտեցավ նա դյութող  
Երգչին պատանի,  
Ու արցունքոտ աչքերով,  
Սիրով բյուրեղյա  
Լուս համբուրեց նա խոռոշ  
Ճակատը նրան:

Դոզաց ազան ու երեր  
Ելավ իր տեղից,  
Ու մոտեցավ ծագիկներ  
Վաճառող ծերին,  
Տվեց նրան մատանին,  
Օղը հուրնրան,  
Վարդեր առավ ու լոին  
Պարզեց աղջկան..

Նըանք երեք աղջիկներ,  
Երեքն էլ գաբուն,  
Երեք հմմյք, երեք ռեբ,  
Երեք խնդություն,  
Նըանք նույն գեղն ունեին,  
Թովվը լուսաբեր,  
Թայց նըանց բաթան էր ուրիշ,  
Ու սիրան էր տարբեր...

1937թ.

o d i l i g e n t e s  
o l o n g u e r i s d e l i g i  
e d e s q u e s c o n d e s q u e s  
e s q u e s c o n d e s q u e s  
e l e p h a n t e s q u e s  
e l e p h a n t e s q u e s  
e l e p h a n t e s q u e s  
e l e p h a n t e s q u e s

q u e s

## ՆՈՐ ԵՐԳԵՐ

Ի՞նչպես կուզեի այգն այս բարուքյա՞մբ,  
Միայն բարուքյա՞մբ բացվեր աշխարհին...

1890 10 23

Notes from the observations  
of the sun made at the  
observatory of the University of

## ԵՍ՝ ԼԱՎԻ, ԲԱՐՈՒ ՀԱՄԲԱՎԱՐԵՐԵՍ...

Այսօր լցված է հոգիս ցնծությամբ,  
Ի՞նչպես այս այս թունոց դայլալով,  
Ելնում եմ, բացում լուսամուտները.  
Ահա մշուշի միջից սակեամպ  
երակ արևը<sup>1</sup>  
Ինչպես կուզեի այգն՝ այս բարությամբ,  
Միայն բարությամբ բացվեր աշխարհն...  
Ենեմ և այսօր հոգուս այս անափ  
Աւրախությունը ցրեմ բոլորին,  
Եվ բոլոր, բոլոր, բոլոր սրտերին  
Բարի լուրերի համբավարերը դառնամ ևս այսօր...  
Տեսնում եմ հանկարծ՝  
Շամբական գորշ պայուսակն ուսին  
Պատերազմներից դարձած զինվորը՝  
Մոտիկ հանդիպման հուզմունքից բեկված  
Ասես անկարող տեղից շարժվելու՝  
Կանգնել է բակում:  
Հոգիս այդ բարի լուրերի լուրը  
Մորն ավետելու  
Անհաս վայելքն է նախաճաշակում:  
Եվ ես հեասպառ առաջ եմ նետվում.  
Ահա տան սեմքն  
Նստած է ցամքած, սեաշոր մի կին.  
Անշուշտ մայրն է նա.  
Եվ մվ կունենա այդպիսի տանջված, կարոսած աչքեր.  
—Մայրիկ, լսում ես, որդիդ է գալիս...  
Եվ մինչ մայրը ծեր՝  
Խինդից խենթացած և համբավատենչ

Վազում, զբկում է ինձ, երանելի ավետարերիս,—  
իմ աչքերի մեջ

Մինչև այդ պահը աշխարհում չեղյալ  
Մի ուրախության արցունք է փայլում.  
ի՞նչ երանություն, մորը անդագրում  
Որդու դալստյան ավետիքը տալ...

Ի՞նչ երանություն, միշտ լավի, բարձ  
Համբավարերը լինել աշխարհում...

1945 թ.

## ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կարեկցում է ինձ հարևանուհիս, մի բարի պառակ,  
Թե ո՞վ է տեսել որ բախտավորվի որբը աշխարհում,  
Որ սիրուս բախտն էլ քարի դեմ առավ,  
Ու ևս մեացի անընկեր, մենակ...

Ինչպես հասկացնեմ ես իմ պարզամիտ հարևանուհուն,  
Որ երկնքի տակ  
Երջանկությունը զգացում է լոկ, մի խոր, անմեկին ինքնազգացում,  
Որ եթե հոգին ունի իր խորքում՝  
Երջանիք է միշտ:

Ինչպես հասկացնեմ, որ զգացումը այդ հազարտինդ  
Ծնվել է ինձ հետ, ինձ ժառացել է զեռ օրորոցում,  
Երբ քնից զարթնող իմ աչքերի դեմ  
Խաղատինիկի գույներն եմ տեսել՝ վառ, զարմանալի,  
Ու մինչև հիմա աշխարհի հանդեղ՝  
Հոգիս այդ մանուկ հիացքով է լի:

Ես ինչուե՛մ պատմեմ, որ հասկանա ինձ պառակն այդ բարի,  
Որ դուցե այդ լուս բախտավորության զգացումն էր, որ  
Լցնելով հոգիս՝ նրա ափերից ի դուրս վարարեց,  
Եվ ես, ես դարձա երջանկագո՛ւյնը երջանիկների՝  
Դարձա բանաստե՛զծ:

Եվ ինչպես պատմեմ, որ տրված է ինձ պարզե մի վերին՝  
Տրված է երգը,  
Ու փարած նրա ամոքող շնչին՝  
Այնպես թեթե՛ է սիրալս փարատում իր վիշտն ու վերքը:  
Ու եթե պատմեմ, կհասկանա իմ հարևանուհին  
Կերտման հաճույքը ստեղծագործության, զեղեցիկ տողի,  
Գեղեցիկ տողի երջանկությունը, որ լցնում է ինձ

Աշխարհի բոլո՛ր ճոխություններով,  
Թե ինչպես է, որ  
Իմ պարզ, անշուայլ հագուստների մեջ  
ես ինձ հարսւաս եմ զգում ավելի;  
Թան զոհարազարդ տիկինները պերճ:  
Քարեսիքա պառավ, ուզում եմ, որ նա հավատա սրտանց,  
Որ չե՞մ ես մենակ ու անբախտ նորից,  
Որ լուսամուտից իմ բարձին ընկած  
Փոքրիկ մի շողը բավական է ինձ,  
Որ ես այդ օրը երջանիկ դարթնեմ.  
Որ իրիկվա դեմ,  
Երբ փակգում եմ իմ փոքրիկ սենյակում՝ անխռու, միայնու՛  
Ծվարած իմ հեզ լուսամփոփի տակ,  
Իմ գեմ՝ սենյակիս պատերը անձուկ  
Բացվո՛ւմ են, փռվում, լայնանո՛ւմ անձերը  
Ու հոգիս խառնում կյանքին, ամենքին.  
Եվ այդ բազմամբոի միայնության մեջ  
Ես ավելի քան ամենքի հետ եմ, ամենքի կողքին...

17 12—46 թ.

## ԵՐԳ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Քայլում էի ես,  
եվ իմ ոտքի ոտկ,  
իմ դլխի վերև, իմ շուրջն ու հեռուն  
Աշխարհն էր փովեր  
եվ իմ ոտքի տակ սիրող սրտի պես հողն էր փխրանում  
ու փխրուն ձայնով խոսում էր ինձ հետ,—  
—Դարեր ու դարեր անհայտության մեջ  
ես վատնում էի իմ բարիքները.  
իմ ծառն ու ծիլերն ու ծաղիկները  
Կյանք էին առնում, ու պտղավորիում, ու մեռնում անվերչ  
իրենք իսկ իրենց գոյին անգիտուկ...  
Դու վերցրիր իմ հարստությունը,  
եվ դրանով իսկ հարստացրիր ինձ  
Ու գու տվեցիր համշերին իմ հեղ  
կենաց պահպանման խորհուրդը հպարտ.  
եվ զաւ տվեցիր իմ ծաղիկներին բուրումներ անբիծ,  
իմ բարիքներին՝ համ և հատ, և գնայն,  
իմ անտառներին՝ շունչն խաղաղության,  
եվ գոյությունը իմ հավերժանուն  
Իմաստավորվեց ակնթարթային քո կյանքու միայն...  
Ասում էր հողը և իմ ճամբեքին  
Շոայլանում էր իր դրախտային ճոխություններով,  
Ամռան ծառերը կուացնում էին ճյուղերը սիրով,  
Որ ես վայելմ պտուղը պարարտ,  
Նազող սեղերը իմ ոտքերի տակ գորդ էին փռում,  
եվ ծաղիկները դեռ իմ ոռւնգերում  
Խնկարկում էին բույրեր հորդառատ:

Ու հողի շնչով արքշին, արքեցած՝

Քայլում էի ես

Աըեկից այլված իմ բորբ ճակատին

Դեմքիս, քըտնաբույս մազերիս վրա

Ցողեր ափսելով ու զովացնելով ճամբաս առօրյան՝

Այդ ջրերն էին ձայնում ցնծագին, —

— Աշխարհի անծայր ծննդյան օրից

Մենք հեղեղվել ենք աշխարհի վրա:

Դարեր ու դարեր օդը բովանդակ

Մենք լցնում էինք ժխորով մեր խոր

Եվ պատառուում լռությունը խոր

Բիրտ ազմուկներով մեր աններգաշնակ.

Ու միայն քո մեջ, ընկալումների խորքնեմ քո անհուն

Մենք խոխղեցինք՝

Դարձանք երգ, շշունջ ու երաժշտություն:

Դու զարդարեցիս խենթ ջրվեժները մարդարիտներով,

Դու արծաթեցիր սահող զետերի գորշ միխրազույնք.

Տվայտանքների խորքում քո խոռով

Աղբյուրների պարզ, անմիտ հնչյունը

Դարձավ մերթ հառաջ, մերթ խաղ ու ծիծաղ, մերթ ակունք երգե,

Եվ փոթորկատենչ աչքերում քո վես

Օվկիանոսների մոլուցքը փոխվեց անեղ հիացքի...

Դարկաշում էին ջրերը այսպես,

Եվ առվակները հազար ծայրերից

Կարոտով գալիս ու փարվում էին իմ խոնջ ոտքերին.

Ծովերը, գետերն ու ջրվեժները հեռաստաններից

Ծիծաղում էին և ունկըս լցնում

Ներդաշնակությամբ մի հեքիաթային:

Եվ աղնվացմած և անէացած, ասես կիսարթուն

Քայլում էի ես:

Հեռու, ամպեղեն իրենց բարձրերից

Խոնարհեցնելով զլուխները ծեր՝

Ինձ լեռներն էին ողջունում նորից, —

— Երկրի թորշոմած երեսի վրա կնճիռների պես


Մենք դիղվել էինք դարեր ու դարեր՝

Գորշ ու անհամբույթ, ու մուայլատես...  
Դու պարզեցիր մեղ բարձրությունը այս երանելի.  
Քո ոգին դարձավ մեր բարձրունքների բնակիչն անմահ՝  
Լցնելով անխոհ ամայությունը մեր գագաթների.  
Դու շղարշեցիր մեղ երազների կապույտով այսպես  
Ու վեհությունը մեր այս երկնագահ  
Դու տվեցիր մեղ...  
Մառում էին լեռներն ու կրկին  
Դեպի վեր էին ձգվում առավել,  
Որ հոգիս բարձրի, առավել բարձրի բերկրանքով լցնեն.  
Եվ բարձրունքների հիացքը աչքիս՝  
Քայլում էի ես.  
Երկնքում արդեն  
Շքահանդեսն էր բացվել աստղերի.  
Ընդունում էի շքերթն աստղային  
Ու որպես երդում  
Լսում շշունջը նրանց խմաստուն,—  
—Տիեզերքի մեջ մենք դար ու դարեր  
Խոնվել էինք անխոհ, անխորհուրդ.  
Խոնուր, տարընթաց՝ մենք վիտում էինք անհունության մեջ,  
Բախվում իրարու, փշրվնեմ, թափիվնեմ,  
Ծնվում ու մեռնում, ու ծնվում անվերջ.  
Եվ թափանցեցիր դու խորհուրդի մեջ մեր անքննելի  
Եվ մեզ տիրացար.  
Միջաստեղային այն ճամբաները անհասանելի,  
Ոլոտեղ մեր լույսը դար է ճամբորդում՝  
Քո ներհուն միտքը վայրկյանում անցավ,  
Եվ ընդպրկելով անեղբությունը մեր շարժումների՝  
Նա համակարգեց և ներդաշնակեց մեր շարժման հունը  
Քո աչքը մեզ այն հայելին դարձավ,  
Որի խորքի մեջ արտացոլվելով տեսանք արդարե  
Մեր աստեղային գեղեցկությունը.  
Դու գարձրեցիր արեին—արե՝

ՄԵՆՔ զգացինք մեր անընդունկելի հաղերժությունը...  
Շշնջում էին աստղերը այսպես ու պայծառացած  
ե՞տ էին քաշում քողը ամողելի,  
Որ բացեն իմ վեստ հայացքի դիմաց  
Անհուններն իշենց...

...եվ տիեզերքի ամենաբարձր լեռան կատարին  
Կանգնել էի ես՝ իմ աչքերի մեջ՝  
Աշխարհն արալող իմաստուն ողին...

4-8/4-46թ.



Պատ. Խմբագիր Գ. Բորյան

Ծաղիկը՝ նկար. Ս Ս ա ե փ ա ն յ ա ն ի

Տիկ. Խմբագիր Ս. Խաչատրյան

ՎՃ 02687 Պատվեր № 22. Տիրաժ 3000. Հեղ. 2 մամ., տպագր. 5 ճամ.  
Հանձնված է արտադրության ՀՊՀ Պ. Ստորագրված է տպագրության  
15 VIII 1947թ.

Հայպետհամարտի տպարան Երևան, Լենինի փող. 65, 1947

Ա Յ Ա Խ Վ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028184

374

ԳԻՒԾ 6 Ր.

